Արձանագրություն N5
<<ՋԿ-ԳՀԾՁԲ-19/3-Տ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 15 օգոստոսի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Հովհաննիսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Ալոյանը, Է. Մխիթարյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/2-Ա ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրակարգ՝ Ջրային կոմիտեի կարիքների համար ջրային համակարգերի վերականգնման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ-ԳՀԾՁԲ-19/3-Տ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲ և <<Ալտերնատիվ>> ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի (այդ թվում գնահատող հանձնաժողովի 13.08.2019թ. N4 արձանագրությամբ պահանջված և 1-ին տեղ զբաղեցրած ընկերությունների կողմից լրացուցիչ ներկայացված փաստաթղթերի) ուսումնասիրության վերաբերյալ:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Հ. Հովհաննիսյանը և նշեց, որ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրվել են հրավերով պահանջվող որակավորման չափանիշների վերաբերյալ 1-ին տեղ զբաղեցրած ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով մասնակից ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերի /այդ թվում գնահատող հանձնաժողովի 13.08.2019թ. N4 արձանագրությամբ պահանջված և 1-ին տեղ զբաղեցրած ընկերությունների կողմից ներկայացված՝ շտկված փաստաթղթերի/ ուսումնասիրության արդյունքները և գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-19/3-Տ ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարել.
   - 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժիններում՝ <<Ալտերնատիվ>> ՍՊԸ-ին,
   - 8-րդ չափաբաժնում՝ <<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ-ին:
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,
3. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,
4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել նշված չափաբաժիններում ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Հ. Հովհաննիսյան

Անդամներ _____ Գ. Ալոյան

_____ Է. Մխիթարյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան